# ԱԶԳԱՅԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

## ՄԻՈՒՕՆԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Վեհափառ և Արքաղնագոյն Հայրապետ ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգ Դ. Կաթողիկոս ի պէտս Եկեղեցեաց Հայոց կամի Աստուծով Ս. Միւռոնի օրհնութիւն կատարել ի 21ն Մայիսի ներկայ 1872 թուականիս ի Մայր Աթոռս Ս. Էջմիածնի, որոյ վասն կը փութամք ծանուցանել համայն Հայկազուն ժողովրդոց՝ հրաւիրելով զնոսա ի նոյն բաղձալի և հոգևոր մեծ հանդէս:

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ մեծապանծ և փառաւոր խորհրդաւոր արարողութեանց միոն և գլխաւորն է Ս. Միւռոնի օրհնութեան շնորհաբաշխ հանդէս, ուստի անշուշտ եմք՝ զի սիրելի Ազգայինք մեր յամենայն կողմանց աշխարհի հոգեւանդն անձկանօք պիտի դիմեն արժանանալ նոյն վսեմ հանդիսին տեսութեան և շնորհաց մասնակցութեան, միանգամայն նաև բազմադարեան շքեղափառ վկայից և պարծանաց Եկեղեցւոյ մերոյ Ս. Այրացս և անգին և սրբազան հնութեանց ուխտի և այցելութեան պարտքը հատուցանելով՝ մխիթարվիլ հրճուանօք ըստ հոգւոյ: